Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Արագածոտնի մարզի << Միրաքի հիմնական դպրոց >> ՊՈԱԿ-ի մաթեմատիկա / 10 դասաժամ / ուսուցչի թափուր տեղի համար։

Մրցույթը անցկացվում է երկու փուլով `թեստավորման և հարցազրույցի։ Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակված հարցաշարի։ Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատության և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույց անցկացնում առանձին։

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

. դիմում / Ձև 1 / , մեկ լուսանկար 3x4 չափի

. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ / դիպլոմ /

. անձը հաստատող փաստաթուղթ,

. << Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ / առկայության դեպքում /,

. ինքնակենսագրություն / Ձև 5 /

.այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

. ՀՀ արական սեռի քաղաքացիները նաև զինվորական գրքույկ,

. հրատարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր

/ առկայության դեպքում /

. որակավորման տարակարգ ունենալու դեպքում ` հավաստող փաստաթուղթ։

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում։Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք։

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև դեկտեմբերի 21-ը ներառյալ , ամեն օր՝ժամը 10։00-ից 15։00-ը, բացի շաբաթ , կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից։

Մրցույթ տեղի կունենա դեկտեմբերի 23-ին ժամը 14։00-ին , ՀՀ Արագածոտնի մարզի Միրաքի հիմնական դպրոցում, հասցեն ` գ. Միրաք , 1-ին փ., շենք 1։

Տեղեկությունների համար զանգահարել՝ / 093865436 / հեռախոսահամարով։